ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ Ու Մ

«25» փետրվարի 2021 թվականի N 20 -Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Ռազմիկ Ռաֆիկի Կարապետյանի, ժառանգության իրավունքով, պատկանող բնակելի տանը՝ /ծածկագիր 04-020-043- / տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 21-րդ փողոց թիվ 34

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում՝պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2021 թվականի փետրվարի 25
Արմավիր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» փետրվարի 2021 թվականի N 19-Ա

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 21 ՓՈՂՈՑ ԹԻՎ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՋՐԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՌԱԶՄԻԿ ՌԱՖԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմավիր գյուղի բնակիչ՝ Ռազմիկ Ռաֆիկի Կարապետյանի գ.Արմավիր 21 փողոց թիվ 34 հասցեում գտնվող,ժառանգության իրավունքով ձեռք բերված սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումը;.

Հաշվի առնելով, որ,հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում,ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով. և հաշվի առնելով որ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1՝Ճանաչել քաղաքացի Ռազմիկ Ռաֆիկի Կարապետյանի /ծնված 29.04.1954թ./, գույքային իրավունքը ՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 21 փողոց թիվ 34 հասցեում գտնվող 1827 քառ/մ օրինական հողամասի վրա՝ գտնվող 1989 թ-ին կառուցված՝ 495.7 քառ/մ բնակելի տան, 47.3 քառ/մ բաց պատշգամբի. 1.9 քառ/մ աստիճանների նկատմամբ;

2.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Ռազմիկ Ռաֆիկի Կարապետյանի սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2021 թվականի փետրվարի 25
գ.Արմավիր